

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի պաշտոնակատարի

25.12.2018թ. թիվ 1188Լ/Կ հրամանի

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 10 25.12.2018թ.

Վանաձոր

2018թ.

I. Ընդհանուր դրույթներ

II. Վանաձորի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) Ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակվել է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, «ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՀՀ կրթության որակավորումների և դրանց համապատասխանող ընդհանրական բնութագրերը)» փաստաթղթում ամրագրված պահանջների, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության, Համալսարանի 2014-18թթ զարգացման հայեցակարգի, Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի որակի ապահովմանը ու մշտադիտարկմանը վերաբերող փաստաթղթերի պահանջների՝ հաշվի առնելով «Եվրոպական կրթական տարածքում որակի ապահովման չափանիշներ և առաջարկներ»-ի դրույթները և «Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքի կառույցների կարգաբերում» (TUNING) նախագծի առաջարկները:

III. ՄԿԾ-ի մշակման և ներդրման տեսլականը և առաքելությունը

1. Նոր ՄԿԾ-ների մշակման և ներդրման, գործող ՄԿԾ-ների վերանայման տեսլականն է՝ ապահովել աշխատաշուկայի պահանջները բավարարող կոմպետենտ մասնագետների պատրաստումը՝ Համալսարանում իրականացվող կամ նոր մշակվող կրթական ծրագրերի միջոցով՝ համաձայն Համալսարանի 2014-18թթ ռազմավարական զարգացման տեսլականի:

2. ՄԿԾ-ի մշակման և ներդրման առաքելությունն է՝ ձգտել ապահովել Համալսարանի կրթական գործունեության մեջ ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի կարիքները՝ հիմնարար և գործնական հմտություններով օժտված, կոմպետենտ, սոցիալապես պատասխանատու մասնագետներ պատրաստելու գործում՝ համաձայն Համալսարանի առաքելության:

III. ՄԿԾ մշակման ռազմավարության նպատակը և խնդիրները

3. ՄԿԾ-ն ուսումնական գործընթացի նպատակները, ակնկալվող արդյունքները, բովանդակությունը, իրականացման պայմանները և տեխնոլոգիաները, շրջանավարտի պատրաստվածության որակի գնահատումը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է:

4. Ելնելով Համալսարանի՝ 2014-18թթ զարգացման տեսլականից և առաքելությունից՝ սույն Ռազմավարությունն ուղղված է Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների անհրաժեշտ որակի ապահովմանը, աշխատաշուկայի վերլուծության վրա հիմնված նոր՝ մրցունակ և արդիական կրթական ծրագրերի մշակման և ներդրման գործընթացների կարգաբերմանը, արդեն իսկ գործող կրթական ծրագրերի կատարելագործմանը՝ Բոլոնյայի գործընթացով պայմանավորված Եվրոպական կրթական տարածքում Համալսարանի ներգրավման, շնորհիվող որակավորումների և մասնագիտացումների փոխձանաչման նպատակով:

5. Ռազմավարության նպատակն է՝ Համալսարանի արդյունավետ պլանավորված աշխատանքի կազմակերպումը և իրականացումը նոր ՄԿԾ-ների մշակման, ներդրման, գործող ՄԿԾ-ների վերանայման, արդիականացման ուղղությամբ :

6. Նոր ՄԿԾ-ների մշակման և ներդրման, գործող ՄԿԾ-ների վերանայման ընթացքը ենթադրում է.

- նոր ՄԿԾ-ի մշակման անհրաժեշտության վերաբերյալ որոշման կայացում,
- շահառուների (Համալսարանի դասախոսներ, որակի ապահովման կենտրոնի, աշխատակազմի անդամներ, ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ) մասնակցությունը ՄԿԾ-ի նախագծման, մշակման, ներդրման, որակի ապահովման գործընթացներում,
- Համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպումը ուսանողակենտրոն կրթական համակարգի տեսանկյունից,
- կոմպետենտ մասնագետի պատրաստումն ապահովող ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում,
- ՄԿԾ-ների կադրային ներուժի զարգացում,
- ուսանողների մոտ անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված պայմանների ստեղծումը և բարելավում,
- ՄԿԾ-ների գիտահետազոտական բաղադրիչի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և զարգացում,
- կրթության որակի ապահովման բնագավառում սոցիալական գործընկերության, գործատուների, այլ շահառուների հետ համագործակցության տարբեր ձևերի կիրառում և ընդլայնում,
- ՄԿԾ-ների իրականացման մշտադիտարկման մեխանիզմների կիրառում և կատարելագործումը,
- տարածաշրջանային և հանրապետական աշխատաշուկայի պահանջարկի բավարարում,
- ՄԿԾ-ների հավատարմագրմանն ուղղությամբ աշխատանքների պլանավորում և իրականացում:

7. Ռազմավարության իրականացման ակնկալվող արդյունքներն են [արտահայտված համապատասխան ցուցիչներով (հավելված1)]

- տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարումը՝ ՄԿԾ-ի շրջանավարտներով տվյալ մասնագիտությամբ մասնագետների պահանջարկը լրացնելու համար,
- շահառուների հետ լայն համագործակցության կայուն համակարգի ստեղծումը՝ ՄԿԾ-ների և կրթական գործընթացի որակը ապահովելու համար
- ուսանողների գիտական գործունեության խթանումը,
- Համալսարանի կրթական միջավայրի բարելավումը,
- որակյալ կրթություն ստանալու գործում հասարակության սպասելիքների և կարիքների բավարարումը:

IV. Ռազմավարության ռեսուրսային ապահովումը

9. Տեղեկատվական ապահովում

Նոր ՄԿԾ-ի մշակմանը վերաբերող տեղեկատվության տարածում Համալսարանի կայքի, Համալսարանի տպագիր մամուլի, այլ տեղեկատվական աղբյուրների միջոցներով :

10. Ֆինանսական ապահովում

Ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ միջոցների պլանավորում և տրամադրում Համալսարանի բյուջեից և արտաբյուջետային միջոցներից (գործատուների հետ համապատասխան պայմանագրերի դեպքում):

11. Կադրային ապահովում

- Բարձր որակավորում ունեցող Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների (անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ Համալսարաններից հրավիրված մասնագետների) ներգրավում ՄԿԾ-ի մշակման և ներդրման աշխատանքային խմբում,

- Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի (անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ Համալսարաններից հրավիրված մասնագետների) անդամների ներգրավում ՄԿԾ-ի բարեփոխմանը, ՄԿԾ-ի մոդուլների, դասընթացների, այլ ուսումնական աշխատանքների կատարմանը

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում, որակավորման բարձրացում:

12. Նյութատեխնիկական ապահովում

- ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ապահովում, հնացած սարքավորումների փոխարեն ժամանակակից սարքավորման ձեռքբերում, ուսանողակենտրոն կրթական միջավայրի զարգացում,

- գրադարանային ֆոնդի (այդ թվում նաև էլեկտրոնային գրադարանային ֆոնդի) համալրում տվյալ ՄԿԾ-ի գիտաճյուղին վերաբերող գրականությամբ (դասագրքեր, մենագրություններ, ամսագրեր),

- տվյալ ՄԿԾ-ին վերաբերող ուսումնամեթոդական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) հավաքածուի ստեղծում, համալրում, արդիականացում:

13. Հնարավոր ռիսկերի վերհանում, վերացման ուղիների մշակում

- ՄԿԾ-ի ներդրման հետ կապված հնարավոր ռիսկերի վերհանում՝ տարածաշրջանային և Համալսարանի զարգացման ռազմավարական նպատակների համատեքստում:

V. Ռազմավարության իրականացման մեխանիզմը

13. Ռազմավարության իրականացումը նախատեսում է ասաջադրված նպատակների և խնդիրների կատարում համաձայն պլանավորած գործողությունների (հավելված1):

Ռազմավարության իրականացման վերահսկողությունը կատարվում է նպատակային ցուցիչների օգտագործմամբ (հավելված 2): Հաշվետու ժամանակահատվածներն են՝ ընթացիկ տարվա սեպտեմբերը և փետրվարը:

14. Ռազմավարության ընթացքի վերահսկողությունն իրականացնում է ուսումնական աշխատանքների գծով Համալսարանի պրոռեկտորը՝ կրթության որակի ապահովման կենտրոնի կատարած մոնիթորինգի տվյալների հիման վրա: Աշխատանքի արդյունքները քննարկվում են Համալսարանի գիտական խորհրդի նիստերին:

15. Ռազմավարության աշխատանքների կատարողներն են՝ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը, աշխատակազմի, օժանդակ կառույցների անդամները, բակալավրիատի/մագիստրատուրայի ուսանողները:

16. Ռազմավարության իրականացման գործում Համալսարանի շահառուների՝ գործատուների մասնակցության ձևերն են՝

- գործատուների մասնակցությունը ՄԿԾ-ների պարտադիր և կամընտրական դասընթացների ուսումնական ծրագրերի, պրակտիկաների ծրագրերի մշակման գործընթացներում,

- գործատուների մասնակցությունը Համալսարանի պրակտիկաների և վերապատրաստումների կազմակերպման և անցկացման արդյունավետությունը բարձրացնելու գործում:

- գործատուների, հովանավորների ներգրավումը ՄԿԾ-ների ներդրման, իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացման, ընդլայնման գործընթացներին:

VI. Ռազմավարության մշտադիտարկումը (մոնիթորինգ):

17. Ռազմավարության մշտադիտարկումը (մոնիթորինգը) իրականացվում է ՄԿԾ-ների մշակման, ներդրման և իրականացման գործընթացների կատարելագործման, շարունակական վերլուծության, արդյունավետության գնահատման և հետագա զարգացման հեռանկարները հստակեցնելու համար:

Ռազմավարության մշտադիտարկումը իրականացվում է Համալսարանի պրոռեկտորի ղեկավարությամբ՝ Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից, համաձայն «Մասնագիտության կրթական ծրագրի ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգ»-ի:

Անցկացված վերլուծությանը, Ռազմավարության իրականացման առկա վիճակին և հեռանկարներին վերաբերող տվյալները տեղադրվում են Համալսարանի կայքում:

18. Մշտադիտարկման ենթակա են.

- ՄԿԾ-ի ուսանողների թիվը,
- ՄԿԾ-ի բովանդակությունը,
- կրթական գործընթացի կազմակերպումը,
- ՄԿԾ-ի կադրային ապահովումը,

- ՄԿԾ-ի նյութատեխնիկական և տեղեկատվական ապահովումը,
- ուսանողների ձեռքբերումները (պորտֆոլիո, գիտական հոդվածներ, մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին, այլ ձեռքբերումներ),
- տեղեկություններ ուսանողների (շրջանավարտների) աշխատանքային գործունեության, ոլորտների վերաբերյալ:

Հավելված 1

Ռազմավարության նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված միջոցառումներ

h/h	Միջոցառումների համալիր	Միջոցառում	Իրականացման ժամկետը	Ակնկալվող արդյունքները	Պատասխանատուներ
I.	1.Տարածաշրջանային և հանրապետական աշխատաշուկայի պահանջների բավարարում	1.1. Աշխատաշուկայի հետազոտության անցկացում և արդյունքների վերլուծություն		1.1.1. Տվյալ ՄԿԾ-ի մշակման/գործող ՄԿԾ-ի հիմնավորում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկի բավարարումը տվյալ մասնագիտությունն ենցող շրջանավարտներով: 1.1.2. Աշխատատեղերի տվյալների բազայի ստեղծում:	Համապատասխան ամբիոն, Համալսարանի սոցիոլոգ
II.	2. Նոր ՄԿԾ-ի մշակման/գործող ՄԿԾ-ի կատարելագործման աշխատանքների կատարում	2.1. Քննարկումներ նոր ՄԿԾ-ի մշակման անհրաժեշտության շուրջ, որոշման կայացում 2.2. Աշխատանքների խնդիրների իրականացում		2.1.1. ՄԿԾ-ի մշակման աշխատանքային խմբի ձևավորում 2.1.2. ՄԿԾ-ի նպատակի, խնդիրների, շրջանավարտի կումպետենցիաների ձևակերպում, աշխատանքի ոլորտների հստակեցում	Ռեկտոր, պրոռեկտոր ուսումնական աշխատանքների գծով, ֆակուլտետի ղեկավարություն, ամբիոնների վարիչներ, դասախոսներ, գործատուներ Համապատասխան ամբիոնի պրոֆեսոր-դասախոսական անձնակազմ, շահառուներ

		տանքների իրականացում՝ համաձայն ՄԿԾ-ի մշակման և ներդրման պլանի		<p>2.2.1. Նոր ՄԿԾ-ի կադրային ռեսուրսների և նյութատեխնիկական բազայի ապահովման տվյալների որոշում</p> <p>2.2.2. Նոր ՄԿԾ-ի հիմնական կրթամասերի դասընթացների ուսումնամեթոդական փաթեթների մշակում և համաձայնեցում</p> <p>2.2.3. Նոր ՄԿԾ-ի նախնական տարբերակի մշակում, քննարկում և համաձայնեցում շահառուների հետ:</p> <p>2.2.4. Գործող ՄԿԾ-ների վերանայում, քննարկում և համաձայնեցում շահառուների հետ:</p>	<p>ՄԿԾ մշակման աշխատանքային խումբ</p> <p>ՄԿԾ մշակման աշխատանքային խումբ</p> <p>Համապատասխան ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ</p> <p>ՄԿԾ մշակման աշխատանքային խումբ</p> <p>ՄԿԾ մշակման աշխատանքային խումբ</p>
III.	3. Նոր ՄԿԾ-ով ուսումնական գործընթացի կազմակերպում	3.1. Ուսումնական գործընթացով պայմանավորված աշխատանքների իրականացում	Պարբերաբար՝ ուսումնական տարվա ընթացքում	3.1.1. Աշխատանքային և ուսումնական պլանների մշակում, համաձայնեցում, հաստատում, ներդրում, աշխատանքների իրականացում	Համալսարանի ղեկավար աշխատակազմ, ղեկանատներ, ամբիոններ, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ,

					ուսումնա- օժանդակ կառույցներ
IV.	4. ՄԿԾ-ի մշտադիտարկման իրականացում	4.1. Մշտադիտարկ- ման մշակված ընթացակարգով աշխատանքների իրականացում	Պարբե- րաբար՝ ուսում- նական տարվա ընթաց- քում	4.1.1. Ուսանողական հարցումների իրականացում՝ մշակված հարցաթերթիկների կիրառությամբ, ստացած տվյալների մշակում, վերլուծություն, արդյունքների ներկայացում՝ համաձայն գործող ընթացակարգի 4.1.2. Բենչմարքինգի իրականացում՝ համաձայն համապատասխան ընթացակարգի 4.1.3. Աշխատանքներ՝ ՄԿԾ-ում ուղղումներ, շտկումներ կատարելու ուղղությամբ 4.1.4. ՄԿԾ-ի նախապատրաստումը հավատարմագրման:	Պրոռեկտոր, կրթության որակի ապահովման կենտրոն, դասախոս- ներ, ուսանողներ, Աշխատա- կիցներ

Հավելված 2

Ռազմավարության իրականացման արդյունքը

h/h	Ցուցանիշ	Բակալավրիատ				Մագիստրատուրա	
		2019	2020	2021	2022	2023	2024
1	Նոր մշակված և ներդրած ՄԿԾ-ով բակալավրիատում (մագիստրատուրայում) սովորողների թիվը Առկա						

	Հեռակա						
2	Վերանայված ՄԿԾ-ների քանակը						
3	Վերանայված ՄԿԾ-ներով սովորողների թիվը						
4	Նոր ՄԿԾ-ի ԱՌԻՓ-ների առկայությունը (%)						
5	Վերանայված ՄԿԾ-ների ԱՌԻՓ-ների առկայությունը (%)						
6	Նոր ՄԿԾ-ում ներգրավված գիտական կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի չափաբաժինը (%)						
7	Վերանայված ՄԿԾ-ներում ներգրավված գիտական կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի չափաբաժինը (%)						
8	Ինտերակտիվ և նորարարական մեթոդների օգտագործմամբ դասավանդվող դասընթացների չափաբաժինը (%)						
9	ՄԿԾ-ի մշակմանը և փորձաքննական աշխատանքներին մասնակցած գործատուների թիվը						
10	Պետական աստեստավորմանը մասնակցած գործատուների թիվը						
11	Գործատուների բավարարվածությունը ՄԿԾ-ի շրջանականներում տրամադրած կրթական ծառայություններից						
12	Աշխատանքի ընդունված տվյալ ՄԿԾ-ի շրջանավարտների թիվը						
13	Շրջանավարտների բավարարվածությունը ՄԿԾ-ով ստացած կրթության որակից						
14	Ուսանողների						

	բավարարվածությունը Համալսարանի կրթական միջավայրով						
15	Գիտական գործունեությամբ զբաղվող ուսանողների չափաբաժինը (%)						
16	Ուսանողների կողմից տպագրված գիտական հոդվածների թիվը						